

---

ԳՐԱԲԱՐԻ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԶԱՐԶԱՆԱԳՐՎԱԾ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐ  
ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ\*

ՔՆԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Բանալի բառեր՝ գրաբարյան դարձվածքներ, դարձվածաբանական բառարան, բառապաշար, բառարաններում չարձանագրված դարձվածքներ, կառուցվածքային վերլուծություն, ձևաբանական դասակարգում, Ղազար Փարպեցի, «Պատմություն Հայոց»:

Նախաբան

Հայերենի դարձվածքների գիտական քննությունը շուրջ մեկ դարի պատմություն ունի: Դարձվածքների վերաբերյալ առաջին տեսական հարցերը տեղ են գտել Արսեն Այտընյանի, Մանուկ Աբեղյանի աշխատություններում<sup>1</sup>, թեև տեսությունը և առանձին գիտակարգը ձևավորվել են ավելի ուշ՝ XX դ. կեսերին<sup>2</sup>: Պետք է նկատել, սակայն, որ լեզվի զարգացման տարբեր փուլերի դարձվածքները միատեսակ ուշադրության և քննության չեն արժանացել: Հավագույնս ուսումնասիրված է արևելահայերենի դարձվածաբանությունը. դարձվածքները քննված են թե՛ իբրև լեզվական համակարգի ինքնուրույն միավորներ, թե՛ օտար լեզուների դարձվածքների հետ զանազան համեմատություններով, և այս հետազոտությունները շարունակվում են: Իսկ գրաբարի և միջին հայերենի դարձվածքների վերաբերյալ նման բազմատեսակ և համակողմանի ուսումնասիրություններ չեն կատարվել, կարելի է ասել, մինչև XXI դարասկիզբ: Ավելին, անգամ գրաբարի առանձին դարձվածաբանական բառարանը<sup>3</sup> տպագրվել է 2012 թ., այնինչ արդի հայերենի դարձվածքների ստվարածավալ բառարաններ տպագրվել են 1975 թ.<sup>4</sup> և 2011 թ.<sup>5</sup> ՀՀ-ում բազմաթիվ ուսումնական դարձվածաբանական բառարանները:

---

\* Ներկայացվել է 16. IX. 2020 թ.: ԵՊՀ Հայ բանասիրության ֆակուլտետի Հայոց լեզվի պատմության ամբիոնի ասպիրանտ: Հոգվածը տպագրության է երաշխավորել գիտական ղեկավար, Բ. գ. դ. Աննա Աբաջյանը (08. IX. 2020 թ.): Ընդունվել է տպագրության 29. I. 2021 թ.:

<sup>1</sup> Տե՛ս Ա. Այտընյան. Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիէննա, 1866, էջ 317–320, Մ. Աբեղյան. Երկեր, հ. 2, Երևան, 1974, էջ 124–126:

<sup>2</sup> Տե՛ս Խ. Բադեկյան. Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Երևան, 1986, էջ 5:

<sup>3</sup> Ռ. Ղազարեան. Գրաբարի դարձվածաբանական բառարան (այսուհետ՝ ԳԴԲ), Երևան, 2012: Էջերը կնշվեն մեջբերումներին կից:

<sup>4</sup> Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան. Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան (այսուհետ՝ ՀԼԴԲ), Երևան, 1975: Էջերը կնշվեն մեջբերումներին կից:

<sup>5</sup> Պ. Բեդիրյան. Հայերեն դարձվածքների ընդարձակ բառարան (այսուհետ՝ ՀԴԲ), Երևան, 2011: Էջերը կնշվեն մեջբերումներին կից:

Սա, անշուշտ, չի նշանակում, որ գրաբարի և միջին հայերենի դարձվածքներն ամբողջովին մոռացվել կամ անտեսվել են. մինչև XXI դարասկիզբ գրաբարի դարձվածքների վերաբերյալ ուսումնասիրություններ ևս արվել են, իսկ արդի հայերենի դարձվածաբանությունը նվիրված գրականության մեջ հաճախ բախական կարևոր անդրադարձներ և դիտարկումներ կան դրանց վերաբերյալ<sup>6</sup>։ Սակայն այն համակարգային ու ամբողջական քննությունը, որը տեսնում ենք արևելահայերենի դարձվածքների համար, գրաբարի ու միջին հայերենի դարձվածքների պարագայում բացակայում է։

XXI դարասկզբից գրաբարի դարձվածքների քննության այս պատկերը փոխվում է. կատարվում են արդեն միայն գրաբարի դարձվածքներին, ընդհանրապես, կամ գրաբարյան այս կամ այն երկի դարձվածքներին, մասնավորապես, վերաբերող ուսումնասիրություններ, որոնցում ներկայացվում և քննվում են ինչպես գրաբարյան բառարաններում արձանագրված, այնպես էլ դեռևս չգրանցված դարձվածքներ։ Բառարանային արձանագրում չունեցող դարձվածքներ կան նաև V դարի հայ մատենագրության մեջ՝ այդ թվում և Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց» երկում։ Դրանց արձանագրումը, արտահայտած իմաստի ճշտումը, կառուցվածքային վերլուծությունը կարևոր է տեսականորեն պատմական բառագիտության, իսկ գործնականում՝ բառարանագրության համար։

Չարձանագրված դարձվածքները, դրանց կառուցվածքային քննությունը

Հետևելով հայ լեզվաբանության մեջ ընդունված ըմբռնմանը, ըստ որի դարձվածքը պատկերավոր հասկացություն արտահայտող, վերաիմաստավորված, վերարտադրելի կայուն բառակապակցությունն է<sup>7</sup> Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց» երկի<sup>8</sup> բառապաշարից կարելի է առանձնացնել նշված հատկանիշներին համապատասխան, սակայն բառարաններում<sup>9</sup> չներկայացված 29 կապակցություն։ Ընդ որում, եթե դարձվածքը

<sup>6</sup> Տե՛ս Ա. Մարգարյան. Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966, Պ. Բեդիրյան. Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Երևան, 1973, Վ. Առաքելյան. Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Երևան, 1981 և այլն։

<sup>7</sup> Տե՛ս Խ. Բադեկյան. նշվ. աշխ., էջ 89։ Հմմտ. Պ. Բեդիրյան. Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Երևան, 1973, էջ 5, Գ. Զա-հուկյան, Էդ. Աղայան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան. Հայոց լեզու, Երևան, 1980, էջ 47, Ա. Սուքիասյան. Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2004, էջ 296։

<sup>8</sup> Ղազար Փարպեցի. Պատմութիւն Հայոց (այսուհետ՝ ՂՓ). – Մատենագիրք հայոց, հ. Բ, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2201–2395։ Էջերը կնշվեն մեջբերումներին կից։

<sup>9</sup> Բառակապակցությունները ստուգվել են գրաբարի հետևյալ բառարաններով՝ Գ. Աւետիքեան, Խ. Սիւրմէլեան, Մ. Աւգերեան. Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետ՝ ՆՀԲ), հ. Ա, Վենետիկ, 1836, հ. Բ, Վենետիկ, 1837, Մ. Աւգերեան, Գ. Ծէլալեան. Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Վենետիկ, 1865, Ռ. Ղազարեան. Գրաբարի բառարան, հ. Ա–Բ, Երևան, 2000, Ռ. Ղազարեան, Հ. Աւետիսեան. Նորայայտ բառեր գրաբարում, Երևան, 2007, Լ. Հովհաննիսյան. Գրաբարի

բնորոշող այս հատկանիշներից պատկերավորությունը և վերաիմաստավորումն ինքնին հասկանալի են համատեքստից, ապա «վերարտադրելի» և «կայուն» լինելու հատկանիշները գրաբարի դարձվածքների դեպքում հնարավոր է որոշել միայն մատենագրության մեջ գործածության այլ օրինակներ մատնանշելով, քանի որ դրանք, իբրև կայուն կապակցություններ, այլևս գոյություն չունեն մեր լեզվամտածողության մեջ: Պետք է նկատել, սակայն, որ գործածության այլ օրինակ գտնելը ներկայումս բավական բարդ ու ոչ լիարժեք գործընթաց է՝ հաշվի առնելով գրաբարով ամբողջ մատենագրության ծավալները, միևնույն բառի ոչ բոլոր օրինակների ներկայացվածությունը բառարաններում և ոչ բոլոր երկերի համաբարբառների գոյությունը:

Ուստի քննվող դարձվածքները բերվում են երկու խմբով՝ Ա. դարձվածքներ, որոնց համար հաջողվել է գտնել այլ երկում կիրառության օրինակ, և Բ., որոնց այլ կիրառություն չի հաջողվել գտնել: Երկրորդ դեպքում դարձվածք լինելու լրացուցիչ ապացույց է համարվում արդի հայերենում նույն կամ նմանատիպ կառուցյի դարձվածք համարվելը և դարձվածաբանական բառարաններում արձանագրված լինելը:

Ա.

1. ԱՆԿԱՆԵԼ ՅՈՏՍՍ – ոտքերն ընկնել, աղաչել. «... այլ պարտ էր փութով եւ երագ երագ անկանել ի յոտսդ արտասոււաւք եւ աղաչելով ...» (ՂՓ, էջ 2389, 2289): Գործածված է նաև Եղիշեի «Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին» երկում<sup>10</sup> «Անկանէր ապաշխարութեամբ յոտս սուրբ եպիսկոպոսացն, եւ աղաչէր խաղապատելով՝ զի մի՛ մերժեալ ընկեացի առ ի նոցանէ» (Եղ, էջ 595): Արդի հայերենում կա նույնիմաստ «ոտքերը ընկնել» դարձվածք (ՀԼԴԲ, էջ 479):

2. ԶԱՆՈՒՆ ԳՐԵԼ (գրեալ պահել) ի ԴՊՐՈՒԹԵԱՆ ԿԵՆԱՅ – հավերժ հիշատակի արժանացնել. «... զորոց իւրաքանչիւր անուն վարձահատոյցն Գրիատոս գրեալ պահէ ի դպրութեան կենաց» (ՂՓ, էջ 2269): Կա նաև Եղիշեի երկում՝ «... որք զանուանս իւրաքանչիւր ի դպրութիւն կենաց գրեցին ի նմին աւուր ի մեծ պատերազմին» (Եղ, էջ 660):

3. ԴԱՐՁՈՒՅԱՆԵԼ ԶԵՐԵՍՍ – հեռանալ, մոռացության մատնել, շեղվել. «... դարձուցեալ գերեսս իւրեանց ի ճանապարհէն արդարութեան...» (ՂՓ, էջ 2263, 2345): Կիրառված է Սեբեոսի «Պատմութիւն» երկում<sup>11</sup> «Իսկ իբրեւ դարձոյց Բարձրեալն գերեսս իւր ի մէնջ եւ նայեցաւ ի մեզ խեթիւ արեգակնն ...» (Սեբ, էջ 515): Արդի հայերենում կա «երես դարձնել (մեկից, մի բանից)» դարձվածք (ՀԼԴԲ, էջ 207):

բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, Երևան, 2010, Ռ. Ղազարեան. Գրաբարի դարձուածաբանական բառարան, Լ. Խաչատրեան. Գրաբարի ուսումնական բառարան, Վենետիկ, 2016:

<sup>10</sup> Եղիշէ. Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին (այսուհետ՝ Եղ). – Մատենագիրք հայոց, հ. Ա, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 521–764: Էջերը կնշվեն մեջբերումներին կից:

<sup>11</sup> Սեբէոս. Պատմութիւն (այսուհետ՝ Սեբ). – Մատենագիրք հայոց, հ. Դ, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 453–565: Էջերը կնշվեն մեջբերումներին կից:

4. ԵԼԱՆԵԼ Ի ԲԵՐԱՆՈՅ – ասել. «... զարմացեալ ... ընդ շնորհ աջողութեանն բանիցն, որ ելանէին ի բերանոյ նորա» (ՂՓ, էջ 2367): Ունի նաև Եղիշեն՝ «Զիք այդր բան աւելի կամ պակաս, որ ոչ ի բերանոյ նորա ելեալ է» (Եղ, էջ 753): Արդի հայերենում կա «բերանից դուրս գալ» (ասել, խոսել) դարձվածք (ՀԼԴԲ, էջ 124):

5. ԶԱՆԶՆ ՏԱԼ – իրեն նվիրել, տալ մի բանի. «Այլ եւ որ սերտ սիրով ետ զանձն իւր այրն եւ ընտրեաց զլաւն» (ՂՓ, էջ 2241): Կիրառված է Աստվածաշնչում՝ «... այլ պաշտել եւ տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց»<sup>12</sup>: Այս դարձվածքը կարող է կիրառվել նաև «զանձն տալ ի + հայցականով դրված անուն խոսքի մաս» ձևով, ինչպես՝ «տալ զանձինս ի նահատակութիւնս» (ՂՓ, էջ 2201), «տալ զանձն ի գործ» (ՂՓ, էջ 2215), «տալ զանձն յայսպիսի վաստակս» (ՂՓ, էջ 2206), «տալ զանձն ի մահ» (ՂՓ, էջ 2277) և այլն:

6. ԶԱՐԵԻ ՏԵՍԱՆԵԼ – ապրել. «... եւ նոքա կեան եւ զարեւ տեսանեն ...» (ՂՓ, էջ 2283): Օգտագործել է Եղիշեն՝ «Զի՞ պիտոյ է մեզ բնաւ կեանք անցաւոր աշխարհիս, եւ կամ ընդէ՞ր տեսանեմք զարեւ յետ մերոց սիրելեաց» (Եղ, էջ 664): Արդի հայերենում եւս կա «արեւ տեսնել» (կյանք տեսնել) դարձվածք (ՀԼԴԲ, էջ 87):

7. ԶԲԱՆՆ ԱՌՆԵԼ – մեկի խոսքը, ցանկացածը անել. «Բայց եթէ զիս հարցնէք, եւ զբանն իմ առնէք ...» (ՂՓ, էջ 2314): Եզնիկ Կողբացին ունի՝ «... եւ հուր եւ հողմք եւ մրրիկք որ առնեն զբան նորա»<sup>13</sup>: Արդի հայերենում կա «խոսքը անել» (իր կամ մեկի խոսքը, ցանկացածը կատարել) դարձվածք (ՀԼԴԲ, էջ 290):

8. Ի ՄԻՏՍ ԱՍԵԼ – ինքն իրեն մտածել. «... զոր յիմ միտս այսպէս ասէի, թէ լոկ Գդիհոն միայն ...» (ՂՓ, էջ 2352): Փ. Բուզանդը «Պատմութիւն Հայոց» երկում ունի «ասել ընդ միտս»՝ «... մարդպետն Դլակ, մեծապէս խնդացեալ ասէր ընդ միտս իւր ...»<sup>14</sup>: Արդի հայերենում կա «մտքում ասել» (ինքն իրեն ասել, խորհել) (ՀԼԴԲ, էջ 445):

9. ԼՍԵԼ (ԻԻԲ) ԱԿԱՆՋԱԻԲ – անձամբ լսել, իմանալ. «... կամիմք, զի ինքն տեսցէ իւրովք աչաւք, եւ ինքն լուիցէ իւրովք ականջաւք» (ՂՓ, էջ 2355): Եղիշեն եւս գործածել է՝ «... եւ ականջաւք իւրեանց լուան զհարչաւրանս վշտից սիրելեաց իւրեանց» (Եղ, էջ 761): Արդի հայերենում կա «ականջով լսել» նույնիմաստ դարձվածք (ՀԼԴԲ, էջ 11): Ղ. Փարպեցին երկում կիրառել է նաև «այլոյ ականջաւք լսել» կապակցութիւնը («... եւ կամի տեսանել այլոյ աչաւք եւ լսել այլոյ ականջաւք՝ ծանր է ծառայութիւնն այն») (ՂՓ, էջ 2331)՝ «ուրիշի միջոցով լսել, տեղեկանալ» իմաստով: Քանի որ գործածութեան այլ օրինակ չի հաջողվել գտնել, չի կարելի պնդել, որ այն դարձվածք է. գուցե Ղ. Փարպեցին ուղղակի համաբանությամբ կիրառել է:

<sup>12</sup> Աստուածաշնչում մատեան Հին եւ Նոր կտակարանաց, Վենէտիկ, 1805, էջ 677:

<sup>13</sup> Եզնիկ Կողբացի. Եղծ աղանդոց. – Մատենագիրք հայոց, հ. Ա, Ե դար, էջ 484:

<sup>14</sup> Փաւստոս Բուզանդ. Պատմութիւն Հայոց. – Մատենագիրք հայոց, հ. Ա, Ե դար, էջ 386:

10. *ԽԱԻՍԵԼ ԻԻՐՈՎ ԲԵՐԱՆՈՎ* – անձամբ ասել. «... եւ ինքն խաւսեցի իւրով բերանով ...» (ՂՓ, էջ 2355): Ղեռնդ Երեց վարդապետն իր երկում<sup>15</sup> կիրառել է նույնիմաստ «պատմել իւր բերանով» «... յաղթութիւնն Իսմայելի զօրացաւ. եւ կործանեցաք զքաղաքս: Զայս բերանով իւրով, ասի, պատմել զինքենէ» (Ղ, էջ 758): Արդի հայերենում կա «իր բերանով խոսել» դարձվածք (ՀԼԴԲ, էջ 255):

11. *ԽՆՈՒԼ ԲԵՐԱՆ* – մեկին լռեցնել, թույլ չտալ խոսել. «... սակայն եւ այնպէս խնուլ զբերանս չարախաւսացն ոչ կարէր» (ՂՓ, էջ 2312), «... եւ զթշնամեացն բերանս ի բանսարկութենէ խնուլ ոչ կարէր» (ՂՓ, էջ 2332): Կիրառել է նաեւ Նղիշեն՝ «Եւ անդէն շիջանէր ի բազմաբոց բորբոքմանէն. քանզի խցաւ բերան չար խրատտուլացն, որ անդադար յորդորէին զնա ի գործ դառնութեան» (Նղ, էջ 615): Արդի հայերենում կա համարժեք «բերանը փակել» դարձվածք (ՀԼԴԲ, էջ 121):

12. *ՅԱԿԱՆՋՍ ՀԱՍԱՆԵԼ* – ականջին հասնել, լսել, իմանալ. «Այլ մանաւանդ յորժամ յականջս կանանց եւս եհաս բան արանցն իւրեանց ...» (ՂՓ, էջ 2336, 2349): Կա Ղեռնդ Երեցի երկում. «... բարձրացեալ բողոք աշխարհիս հասանէր յականջս իշխանին Իսմայելի ...» (Ղ, էջ 757): Արդի հայերենում կա նույնիմաստ «ականջին հասնել» դարձվածք (ՀԼԴԲ, էջ 9):

13. Ո՞ ԳԻՏԱՅ – ո՞վ գիտի, հայտնի չէ, ոչ ոք չգիտի. «Բայց վասն Հոնացն ո՞ գիտաց, հաւանի՞ն գալ թէ ոչ» (ՂՓ, էջ 2314): Գործածված է նաեւ Աստվածաշնչում՝ «Ո՞ գիտաց զմիտս Տեառն, եւ ո՞ եղեւ նմա խորհրդակից ...»<sup>16</sup>: Արդի հայերենում կա «ո՞վ գիտի» նույնիմաստ դարձվածք (ՀԼԴԲ, էջ 472):

14. *ՎԱՂ ԵՒ ԿԱՄ ԱՆԱԳԱՆ* – վաղ թե ուշ. «... վաղ եւ կամ անագան զերծանել ի մահուանէ ...» (ՂՓ, էջ 2254): Գործածել է Ագաթանգեղոսը «Պատմութիւն Հայոցում»՝ «... զի եթէ վաղ եթէ անագան, սակայն քակտի հնացեալ մարմինն ...»<sup>17</sup>: Արդի հայերենում կա «վաղ թե ուշ» (երբ էլ որ լինի, երբեկից) դարձվածք (ՀԼԴԲ, էջ 543):

15. *ՏԵՍԱՆԵԼ (ԻԻՐՈՎՔ) ԱԶԱԻՔ* – անձամբ տեսնել. «... կամիմք, զի ինքն տեսցէ իւրովք աչաւք, եւ ինքն լուիցէ իւրովք ականջաւք» (ՂՓ, էջ 2355): Այս կապակցութիւնը կիրառել է նաեւ Նղիշեն՝ «տեսաք աչաւք մերովք» (Նղ, էջ 634), «ձերոյին աչաւքդ տեսէք» (Նղ, էջ 711), «աչաւք իմովք տեսի» (Նղ, էջ 721) և այլն: Արդի հայերենում կա նույնիմաստ «աչքով տեսնել» (անձամբ տեսնել) դարձվածք (ՀԼԴԲ, էջ 57): Ղ. Փարպեցին գործածել է նաեւ «այլոյ աչաւք տեսանել» (ՂՓ, էջ 2355) կապակցութիւնը, որի այլ օրինակ չհաջողվեց գտնել: Արդի հայերենում թեեւ կա «ուրիշի աչք(եր)ով նայել» դարձվածք, բայց տարբեր իմաստով՝ «1. քննադատական, անկողմնակալ, անաչառ վերաբերմունք ունենալ, 2. օտարի նման,

<sup>15</sup> Ղեռնդ Երեց. Պատմաբանութիւն Ղեռնդեայ մեծի վարդապետի հայոց, որ յաղագս երեւելոյն Մահմետի եւ զկնի նորին, թէ որպէս եւ կամ որով աւրինակաւ տիրեցին տիեզերաց, եւս առաւել թէ հայոց ազգիս (այսուհետ՝ Ղ). – Մատենադարձ հայոց, հ. 2, Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 735–854: Էջերը կնշվեն մեջբերումներին կից:

<sup>16</sup> Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր կտակարանաց, էջ 513:

<sup>17</sup> Ագաթանգեղոս. Պատմութիւն Հայոց. – Մատենադարձ հայոց, հ. Բ, Ե դար, էջ 1364:

անտարբեր վերաբերվել» (ՀԼԴԲ, էջ 575), այնինչ Ղ. Փարպեցու բնագրում այն հակադրված է «իր աչքով տեսնել» դարձվածքին:

Բ.

1. ԱՅԼՈՅ ԲԵՐԱՆՈՎ ԽԱԻՍԵԼ – ուրիշի միջոցով ասել. «... եւ մի՛ ալոյ աչաւք տեսցէ եւ ալոյ ականջաւք լուիցէ եւ ալովք հանապազ գիտացէ զմարդ ...» (ՂՓ, էջ 2355): Արդի հայերենում կա նույնիմաստ «(մեկի) բերանով խոսել» դարձվածք (ՀԼԴԲ, էջ 126):

2. ԱՌՆԵԼ ԳԼՈՒԽ ԳՈՐԾՈՅՍ – գործը գլուխ բերել. «... նա իշխէ առնել գլուխ Հայոց գործոյս» (ՂՓ, էջ 2348): Ժամանակակից հայերենում կա համարժեք, բայց որոշակի փոփոխություններ «գործը գլուխ բերել» դարձվածք (ՀԼԴԲ, էջ 174):

3. ԱՌՆՈՒԼ ԶՀԱՄՆ – լավն ու վատը փորձել. «... որ եղեալ առ յապա երեւեցաւ բազմաց, եւ ճաշակեալ առին զհամ եւ զարմացան» (ՂՓ, էջ 2338): Արդի հայերենում կա նույնիմաստ «համը առնել» դարձվածք (ՀԼԴԲ, էջ 341):

4. ԱՐԿԱՆԵԼ ԶԱՆՁՆ ԸՆԴ ՄԵՂՕՔ – մեղքի մեջ գցել. «... ընդէ՞ր առ նախանձ արկանիցեն զանձինս ընդ անապաշխար մեղօք ...» (ՂՓ, էջ 2383): Արդի հայերենում կա «մեղքի մեջ գցել» (ՀԼԴԲ, էջ 422):

5. ԵԼԱՆԵԼ Ի ՄՏԱՅ – մտքից ելնել, մոռացվել, հիշողությունից ելնել. «... թուի թէ երկիւղ գործոյն չեղանէ ի մտաց» (ՂՓ, էջ 2352): Ընդ որում, թեև զրաբարի դարձվածաբանական բառարանում կա «ի մտաց ելանել» դարձվածք (ԳԴԲ, էջ 129), սակայն այն ունի այլ իմաստ՝ «խելքը կորցնել, ցնորվել»: Արդի հայերենում կա նույնիմաստ «մտքից ելնել, ընկնել» դարձվածք (ՀԼԴԲ, էջ 444):

6. ԶՅՈՅՍ ԴՆԵԼ (զոք) – հույսը դնել մեկի վրա, ապավինել. «... բայց զյոյս մեր ոչ ի Հոռոմս եղեալ է եւ ոչ ի Հոնս ...» (ՂՓ, էջ 2314): Արդի հայերենում կա «հույսը դնել (մեկի, մի բանի վրա)» դարձվածք (ՀԼԴԲ, էջ 373):

7. ԸՆԴ ԶԵՌԱՄԲ ՈՒՆԵԼ – տրամադրության տակ ունենալ, ձեռքի տակ ունենալ. «... եւ հնազանդեցուցեալ ընդ ձեռամբ իւրեանց ունին» (ՂՓ, էջ 2312): Արդի հայերենում կա «ձեռքի տակ ունենալ» (ՀԼԴԲ, էջ 390):

8. ԸՍՏ ԿՇՈՒԵԼՈՅ ԱԿԱՆ – աչքի չափով. «... ոչ գոյ ի նոսա, ըստ կշռելոյ ական, աւելի քան զչորս հազար արանց» (ՂՓ, էջ 2345): Արդի հայերենում կա «աչքի չափով» դարձվածք (ՀԼԴԲ, էջ 52):

9. ԿՈՐՈՒՍԱՆԵՄ Ի ՄԻՋՈՅ – ոչնչացնել. «... առ ոչինչ համարիմ զայն՝ չափ ի ձէնջ աւգուտս եւ զվաստակս, այլ կնաւ եւ որդւովք եւ ազգաւ կորուսանեմ ի միջոյ» (ՂՓ, էջ 2246): Գրաբարի դարձվածաբանական բառարանում կա «բառնալ ի միջոյ» (մեջտեղից վերացնել, ոչնչացնել) դարձվածք (ԳԴԲ, էջ 53), իսկ «կորուսանեմ» և «բառնամ» բայերը հոմանիշներ են<sup>18</sup>: Արդի հայերենում կա դարձվածք է համարվում «մեջտեղից վերացնել» կապակցությունը (ՀԼԴԲ, էջ 424):

<sup>18</sup> Տե՛ս Ռ. Ղազարեան. Գրաբարի հոմանիշների բառարան, Անթիլիաս-Լիբանան, 2006, էջ 390:

10. ԶԳԵԼ ԶՈՐՈՒՄԱՅԹ – դավ նյութել մեկի դեմ. «... որ թերեւս ըստ հոգեղէն բնութեանն տեսեալ զառ ի ծածուկ ձգեալ զորոգայթ թշնամեացն ...» (ՂՓ, էջ 2388): Արդի հայերենում կա «որոգայթ լարել» (դավ նյութել մեկի դեմ) դարձվածք (ՀԼԴԲ, էջ 486):

11. ՄՏԱՆԵԼ ԸՆԴ ԳԵՏԻՆ – ամաչել, ամոթից գետինը մտնել. «Եւ բայց թէ ապա եւ որ նոցա իսկ նման մարդ էր, որ ձեր խարող հացկատար կաց ջոկն էր՝ եւ ոչ կորացեալ մտանէր ընդ գետին ...» (ՂՓ, էջ 2361): Արդի հայերենում կա նույնիմաստ «գետինը մտնել» դարձվածք (ՀԼԴԲ, էջ 135):

12. (ԱԶԱԽՔ) ՈՒՂԻՂ ՀԱՅԻԼ – անկողմնակալ լինել, ճիշտ դատել. «... աչաւք ուղիղ հայէին ընդ իս» (ՂՓ, էջ 2332), «... ընդ իս չհայէիք ուղիղ» (ՂՓ, էջ 2332): Արդի հայերենում կան «շիտակ նայել» (ՀԴԼԲ, էջ 1001) և «ծուռ աչքով նայել» (ՀԼԴԲ, էջ 307) դարձվածքներ:

13. ՎՃԱՐԵԼ ԶՈԳԻՆ – մահանալ. «Որոյ դառնակոռոչ չարալլուկ հեծմամբ յաւուրս սակաւս վճարեալ զողին՝ սատակէր անխոստովան ...» (ՂՓ, էջ 2346): Արդի հայերենում կա «հոգին տալ, ավանդել» դարձվածք (ՀԼԴԲ, էջ 364):

14. ՏԱԼ ՓԱՌՍ ԱՍՏՈՒԾՈՅ – շնորհակալ լինել Աստուծոյ. «Եւ թագաւորին լուեալ զայս եւ խնդալից եղեալ՝ ետ փառս Աստուծոյ ...» (ՂՓ, էջ 2213, 2285, 2291, 2304, 2319, 2336, 2343, 2356): Արդի հայերենում եւս կա «փառք տալ Աստուծուն» դարձվածք (ՀԼԴԲ, էջ 577):

Ղ. Փարպեցու երկում կիրառված «յոյս ունիլ»-ը (ՂՓ, էջ 2271), «շնորհել թողութիւն մեղաց»-ը (ՂՓ, էջ 2259), «յետս տանիլ»-ը (հետ տանել, հետ քաշել) (ՂՓ, էջ 2333) դարձվածք չենք համարում, թեև ՀԼԴԲ-ում իբրև դարձվածք են ներկայացված «հույս ունենալ» (ՀԼԴԲ, էջ 374), «մեղքերի թողություն տալ» (ՀԼԴԲ, էջ 421), «հետ տանել» (ՀԼԴԲ, էջ 357) համարժեք կապակցությունները: Կարծում ենք, այս միավորները վերաիմաստավորված չեն, այլ կայուն կապակցություն կամ հարադրություն են:

Այսպիսով, առանձնացրել ենք գրաբարի բառարաններում չարձանագրված 29 դարձվածք: Դրանց գերակշիռ մասը, ըստ խոսքիմասային պատկանելության, բայական է, 2-ը՝ մակբայական («ըստ կշռելոյ ական», «վաղ եւ կամ անագան»), 1-ը՝ եղանակավորող («ո՞գիտաց»):

Ըստ կառուցվածքային-կաղապարային դասակարգման՝ եղանակավորող դարձվածքը երկբաղադրիչ է, պատկանում է դերանուն<sup>19</sup> բայ կաղապարին: Մակբայական դարձվածքները երկանդամ են՝ բայ<sup>+</sup>գոյական և ածական<sup>+</sup>ածական կաղապարներով: Բայական դարձվածքները երկբաղադրիչ<sup>19</sup> և բազմաբաղադրիչ են: Երկբաղադրիչները ներկայացնում են հետևյալ պատկերը՝

ա. բայ<sup>+</sup>գոյական – 10 դարձվածք. «անկանել յոտս», «առնուլ զհամն», «դարձուցանել զերեսս», «ելանել ի բերանոյ», «ելանել ի մտաց», «խնուլ

<sup>19</sup> Երկբաղադրիչ ենք համարում 2 լիարժեք անդամից կազմված (այդ թվում՝ նախդիր կամ նախադրություն ունեցող) դարձվածքները:

բերան», «կորուսանել ի միջոյ»<sup>20</sup>, «ձգել զորոգայթ», «մտանել ընդ գետին», «վճարել զոգին»:

բ. գոյական+բայ — 6 դարձվածք. «զանձն տալ», «զարեւ տեսանել», «զբանն առնել», «ընդ ձեռամբ ունել», «ի միտս ասել», «յականջս հասանել»:

Բազմաբաղադրիչներից մեկը քառանդամ է՝ «զանուկն գրել ի դպրութիւն կենաց» (գոյական+բայ+գոյական+գոյական), մյուսները՝ եռանդամ հետեյալ կաղապարներով՝

ա. բայ+դերանուն/գոյական<sup>21</sup>+գոյական — 3 դարձվածք. «խաւսել (իւրով) բերանով», «լսել (իւր) ականջաւք», «տեսանել (իւրովք) աչաւք»:

բ. բայ+գոյական+գոյական — 3 դարձվածք. «առնել գլուխ գործոյս», «արկանել զանձն ընդ մեղօք», «տալ փառս Աստուծոյ»:

գ. գոյական+բայ+դերանուն/գոյական — 1 դարձվածք. «զյոյս դնել զոք»:

դ. (գոյական)+մակբայ+բայ — 1 դարձվածք. «(աչաւք) ուղիղ հայիլ»:

ե. ածական+գոյական+բայ — 1 դարձվածք. «այլոյ բերանով խոսել»:

### Եզրակացութիւն

Այսպիսով, Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց» երկի բառապաշարի մանրամասն վերլուծութիւնից և գրաբարյան բառարաններով ստուգումներից հետո կարելի է փաստել, որ երկում կիրառված դարձվածքներից 29-ը ներկայացված չեն բառարաններում: Դրանց դարձվածք լինելն ապացուցվում է սահմանող հատկանիշներով կառուցվածքային (բառակապակցութիւններ) և իմաստային (վերաիմաստավորում), իսկ այլ երկերից բերված կիրառութիւնների օրինակները ցույց են տալիս այդ բառակապակցութիւնների կայուն ու պատրաստի լինելու հանգամանքը: Արդի հայերենի դարձվածքների հետ համեմատութիւնից պարզ է դառնում, որ դիտարկվող 29 դարձվածքից 26-ը ժամանակակից հայերենում ունեն գրեթե նույն կազմութեամբ համարժեքներ, ինչը ևս այդ կապակցութիւնները դարձվածք համարելու լրացուցիչ ապացույց է:

Կառուցվածքային վերլուծութիւնից երևում է, որ այս դարձվածքները համապատասխանում են գրաբարի բառակապակցութեան օրինաչափութիւններին, որն է առանձնահատկութիւն կամ շեղում չունեն: Դրանք հիմնականում երկբաղադրիչ և եռաբաղադրիչ կառույցներ են՝ անվանողական բնույթի, որոնց անդամները գտնվում են ստորադասական հարաբերութեան մեջ: Ձևաբանական տեսակետից միանգամայն օրինաչափ է մեծ մասի (26 դարձվածք) բայական լինելու հանգամանքը, ինչը բնորոշ է ինչպես գրաբարի, այնպես էլ արդի հայերենի դարձվածաբանութեանը՝ պայմանավորված հայերենում բայ խոսքի մասի ունեցած առանձնահատուկ դերով ու նշանակությամբ: Հաշվի առնելով այս ամենը՝ կարելի է եզրակացնել, որ կապակցութիւնները գրաբարյան լիարժեք դարձվածքներ են

<sup>20</sup> «Ի միջոյ» բառը գոյական է, թեև ինչպես ՆՀԲ-ն էլ նշում է, չփոխվում է մակբայի կամ նախադրութեան հետ՝ «Ի ՄԻՋՈՅ. բացառ. միշտ է անուն, թէ եւ մկ. կամ նախադր. կարծեսցի» (ՆՀԲ, հ. Բ, էջ 259):

<sup>21</sup> Քանի որ որոշ դարձվածքներ ունեն կամընտիր անդամ, կաղապարում ներկայացնում ենք բոլոր հնարավոր խոսքի մասերը, որոնցով կարող է հանդես գալ այդ անդամը: Դարձվածքի կամընտիր (ֆակուլտատիվ) անդամների մասին տե՛ս Պ. Բեգիբյան. Ժամանակակից հայերենի դարձվածաբանութիւն, էջ 93–99:



**և կարող են գրանցվել գրաբարի բառապաշարի հարստությունը ներկայացնող բառարաններում:**

Քնար Հարությունյան – Մ. Մաշտոցի անվ. Մատենադարանի ձեռագրագիտությունից և բառարանագիտությունից պրոֆեսոր, Գիտական հետաքրքրությունների ձեռագիր մատյաններ, հայերեն մատյանների նկարագրություն-ուսումնասիրություն, V դ. հայ մատենագրություն, գրաբարի բառապաշար, դարձվածաբանություն: Համահեղինակ է 1 գրքի և 3 ձեռագրացուցակի, հեղինակ՝ 11 հոդվածի: knarbanaser@gmail.com

## REFERENCES

- Abeghyan M. Yerker, h. Z, Yerevan, 1974 (In Armenian).  
 Agatangeghos. Patmutivn hayots. – Matenagirk hayots, h. B, E dar, Antilias-Libanan, 2003 (In Grabar).  
 Arakelyan V. Aknarkner hayots grakan lezvi patmutyan, Yerevan, 1981 (In Armenian).  
 Arakelyan V. Aknarkner hayots grakan lezvi patmutyan, Yerevan, 1981 (In Armenian).  
 Astuadsashunch matean Hin ev Nor ktakaranats, Venetik, 1805 (In Armenian).  
 Avetikean G. Sivrmelian Kh., Avgerean M. Nor bargirk haykazean lezui, h. A, Venetik, 1836, h. B, Venetik, 1837 (In Grabar).  
 Avgerean M., Jelalean G. Ardzern bararan haykazean lezui, Venetik, 1865 (In Grabar).  
 Aytenean A. Knnakan kerakanutivn ashkharabar kam ardi hayeren lezui, Vienna, 1866 (In Armenian).  
 Badikyan Kh. Jamanakakits hayereni dardzvadzayin miavornere, Yerevan, 1986 (In Armenian).  
 Bediryan P. Hayeren dardzvadzkneri endardzak bararan, Yerevan, 2011 (In Armenian).  
 Bediryan P. Jamanakakits hayereni dardzvadzabanutyun, Yerevan, 1973 (In Armenian).  
 Eghishe. Vasn Vardanay ev hayots paterazmin. – Matenagirk hayots, h. A, E dar, Antilias-Libanan, 2003 (In Grabar).  
 Eznik Koghbatsi. Eghdz aghandots. – Matenagirk hayots, h. A, E dar, Antilias-Libanan, 2003 (In Grabar).  
 Ghazarean R., Avetisean H. Norayayt barer grabarum, Yerevan, 2007 (In Grabar).  
 Ghazarean R. Grabari bararan, h. A-B, Yerevan, 2000 (In Grabar).  
 Ghazaryan R. Grabari dardzuadzabanakan bararan, Yerevan, 2012 (In Grabar).  
 Ghazarean R. Grabari homanishneri bararan, Antilias-Libanan, 2006 (In Armenian).  
 Ghazar Pharpetsi. Patmutivn hayots. – Matenagirk hayots, h. B, E dar, Antilias-Libanan, 2003 (In Grabar).  
 Ghevond Yerec. Patmabanutivn Ghevondeay medsi vardapeti hayots, vor yaghags ereveloyn Mahmeti ev zkni norin, te vorpes ev kam vorov avrinakav tiretsin tiezerats, evs aravel te hayots azgis. – Matenagirk hayots, h. Z, Antilias-Libanan, 2007 (In Grabar).  
 Hovhannisean L. Grabari bararan. Nor haykazyan bararanum chvkayvats barer, Yerevan, 2010 (In Grabar).

- Jahukyan G., Aghayan Ed., Arakelyan V., Kosyan V. Hayots lezu, Yerevan, 1980 (In Armenian).  
 Khachatryan L. Grabari usumnakan bararan, Venetik, 2016 (In Armenian).  
 Margaryan A. Hayereni haradir bayere, Yerevan, 1966 (In Armenian).  
 Pavstos Buzand. Patmutyun hayots. – Matenagirk hayots, h. A, E dar, Antilias–Libanan, 2003 (In Grabar).  
 Sebeos. Patmutivn. – Matenagirk hayots, h. D, E dar, Antilias-Libanan, 2005 (In Grabar).  
 Sukiasyan A., Galstyan S. Hayots lezvi dardzvadzabanakan bararan, Yerevan, 1975 (In Armenian).  
 Sukiasyan A. Jamanakakits hayots lezu, Yerevan, 2004 (In Armenian).

ФРАЗЕОЛОГИЗМЫ В ТРУДЕ «ИСТОРИЯ АРМЕНИИ»  
 ЛАЗАРЯ ПАРПЕЦИ, НЕ ПРЕДСТАВЛЕННЫЕ В  
 СЛОВАРЯХ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА

КНАР АРУТЮНЯН

Резюме

*Ключевые слова: древнеармянские фразеологизмы, фразеологический словарь, лексика, фразеологизмы, не вошедшие в словари, структурный анализ, морфологическая классификация, Лазарь Парпеци, «История Армении».*

Изучение древнеармянских фразеологизмов имеет относительно небольшую историю, и некоторые вопросы еще не решены окончательно. Один из них – вопрос фразеологизмов, не представленных в словарях. Исследование лексики труда «История Армении» историка V века Лазаря Парпеци выявило 29 новых фразеологизмов, не вошедших ни в фразеологический, ни в другие словари древнеармянского языка. Однако их семантический, структурный и морфологический анализ, а также аналоги в современном армянском языке дают основание считать эти единицы полноценными фразеологизмами, частью лексики, которые должны войти в словари. Например: «անկանել յոտս» («падать в ноги»), «գարձոցանել զերես» («вернуться спиной»), «ո՞վ գիտաց» («кто его знает») и т. д.

В основном эти фразеологизмы глагольные: «խնուլ բերան» («затыкать рот»), «մտանել ընդ գետին» («провалиться сквозь землю»), «յականջս հասանել» («доходить до ушей») и т. д.; по структуре двухкомпонентные: «ընդ ձեռամբ ունել» («держат в руках»), «վճարել զոգին» («отдать богу душу») и трехкомпонентные: «գլխս դնել զոք» («полагаться на кого-либо»), «տեսանել իւրովք աչաւք» («увидеть своими глазами»).

Таким образом, после детального анализа этих 29 единиц, находя для многих из них примеры в других древнеармянских текстах и сравнивая с аналогичными единицами в современном армянском языке, можно утверждать, что они являются фразеологизмами.

*Կնար Արուտյուն – младший научный сотрудник отдела кодикологии Матенадарана им. М. Маштоца, аспирантка кафедры истории армянского языка факультета армянской филологии ЕГУ. Научные интересы: рукописи, описание-изучение армянских рукописей, армянская литература V века, лексика грабара, фразеология. Соавтор 1 книги и 3 каталогов рукописей, автор 11 статей. knarbanaser@gmail.com*

# IDIOMS IN THE “HISTORY OF ARMENIA” BY GHAZAR PARPETSİ NOT RECORDED IN THE DICTIONARIES OF OLD ARMENIAN

KNAR HARUTYUNYAN

## Summary

*Key words: Old Armenian (Grabar) idioms, dictionary of idioms, vocabulary, idioms not recorded in the dictionaries, structural analysis, morphological classification, Ghazar Parpetsi, “History of Armenia”.*

The study of Old Armenian (Grabar) idioms has got a comparatively short history, so there are some questions which have not been solved conclusively. One of them is the problem of the idioms not recorded in the dictionaries. The study of the vocabulary of “History of Armenia” by the 5th century historian Ghazar Parphetsi revealed 29 new idioms not included in either the phraseological or other dictionaries of the Old Armenian language. However, the semantic, structural and morphological analysis of these units and their analogues in Modern Armenian give opportunity to consider them as full-fledged idioms, part of the vocabulary that should be included in the dictionaries, such as “անկանել յոտս”, “դարձուցանել զերես”, “ո՞վ գիտաց”, etc.

In general, these idioms are verbal (“խնուլ բերան”, “մտանել ընդ գետին”, “յականջս հասանել”, etc.). According to the structural features, most of them are two-component (“ընդ ձեռամբ ունել”, “վճարել զողին”) and tree-component units (“զյոյս դնել զոք”, “տեսանել իւրովք աչաւք”).

Thus, after detailed analysis of these 29 units, finding examples for many of them in the various texts of Old Armenian and comparing with similar units of Modern Armenian, it can be argued that they are idioms.

*Knar Harutyunyan – Junior Researcher at the Department of Codicology of Matenadaran named after M. Mashtots, PhD student at the Chair of Armenian language history of the YSU faculty of Armenian philology. Scientific interests: manuscripts, describing and studying of Armenian manuscripts, Armenian literature of the 5th century, the lexicon of Grabar, idioms. Coauthor of 1 book and 3 catalogues of manuscripts, author of 11 articles. knarbanaser@gmail.com*